

ցուած «քերականութեան» արժանաւոր աշակերտ: Փաստ էր, որ չէին կերած ծեծ: Չէին նախատուած: Չէին սողացած: Հազար ու հարիւր եօթանասունին գուցէ չլլար սա դրուագը այնքան ալ յատկանշական, վասնզի ավագանին (թուրքին շուքին հայն ալ տեղ մը ունէր) գիտէր ինքզինքը հարկադրել: Ու շատ չէին հայերը, որոնք, թլփատեալի մը տուած իրենց կոնակը՝ ազատ էին կարելի անգգամութեանց: Բայց ջարդերէն ետքը, երբ փողոցի ստահակն ալ, առանց պատիժի, կարող էր ապտակել կեա-վուր աղա մը:

Արեւելահայերը իրենց շրջաններու թուրքին վարժը-լած, բնազդական ստորագնահատում մը ունին տիպա-րին ընդհանրութենէն: Սահմանամերձ գաւառներու մէջ, անոնց գործիչները ճանչցան առաւելապէս քիւրտը, որուն նախնական ու տոկուն նկարագիրներուն մէջէն արհամարհանք միայն զգացին թուրքին հանդէպ, այդ վայրերուն մէջ օտար ու անհաստատ, բարբարոս խսկ ըլլալու անկարող, առանց բանակին օգնութեան: Այս օրինակը, հակառակ իր քիչ մը նուազ կողմին, ունեցաւ ընկեր Մաթիկին վրայ տասը գիրքէ աւելի խոր ազդե-ցութիւն: Անշուշտ, շատ մը տարիներ այսպէս էին ապ-րեր մեր պապերը այս հողերուն վրայ:

Այս լուծէն ազատուող արեւելահայը դիւրին էր մոռցեր իր պապերուն փորձառութիւնները: Հիմա տե-սաւ, որ ինչպէս կը շարունակէր ապրիլ իր ժողովուրդը գոնէ Եփրատէն ասդին: Տաղա՞նդ: Ստորութի՞ւն: Անոր մտքէն չանցան երկուքն ալ: Շատ կանխահաս պիտի ըլլար մեր նոր գրականութեան մէջ, նոր-նոր կաղապար-լած արժեգրկող կամ գերազնահատող այս տարագները այժմեան յօրինուածքով ունենալ իրմէ: Ստրկախտ: Կեղ-ծախտ: Շարունակելը ձեզմէ: «Խենթին հետ խենթ»ը ազ-գային առած է, ու նման ամէն առածի, ունի գրական ի-մաստ մը, որմէ զուրկ է երբեմն մեր թերթերուն քառորդ դարեան հաւաքածոն, խմբագրական քարոզներու սքո-ւէն: